ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 33-Ա

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՎ ՁՄՌԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով

Համայնքի ավագանին որոշում է

1.Ներհամայնքային փողոցները կապիտալ վերանորոգելու և ձմռան աշխատանքները կազմակերպելու նպատակով տրամադրել 800000 դրամ համայնքի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից:

2. Այդ նպատակով բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի ,,Համայնքի փողոցների նորոգում,, նախահաշվի /04.05.01/ 4-րդ եռամսյակից 800000 դրամ փոխանցել քաղաքապետարանի ,,Ձրամատակարարման և բարեկարգման,, ՓԲԸ-ին /05.01.01/:

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է

Զեղչել համայնքի ներքոհիշյալ հարկատուների 2011 թ. գույքահարկի գումարները հետևյալ չափերով.

Թումանյան	Գագիկ	JC -5	-	84500 դրամ
Հայրապետյան	Վիկտոր	Հասարակական նշանակ. շինություն	-	78073 դրամ
Օհանյան	Սպարտակ	ՕՊԵԼ VEKTRA	-	11400 դրամ
Ադամյան	Ռոզա	Ֆոլկսվագեն	-	114146 դրամ

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 31-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3 ԱՎՏՈՏՆԱԿԸ, 2 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 6 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով, և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 913-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է

1. Մաշտոցի 23-40^{բ} հասցեում գտնվող 40.52 քմ մակերեսով առևտրի սրահը 401148 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 20.3 քմ մակերեսով հողամասը, 16443 դրամով, օտարել Դավիթ Սայամյանին:
2. Տավուշեցու 6-Ա հասցեում գտնվող 182 քմ մակերեսով տնտեսական և օժանդակ շինությունները, 400000 դրամով, և նրանց պահպանման ու սպասարկման 360քմ մակերեսով հողամասը, 291600 դրամով, օտարել Արտյոմ Ռոբերտի Մեժլումյանին:
3. Մաշտոցի 90-1^{Ա} հասցեում գտնվող 50 քմ մակերեսով օժանդակ շինությունը 110000 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 50 քմ մակերեսով հողամասը, 40500 դրամով, օտարել Հայկասար Ռազմիկի Բաղալյանին:
4. Մաշտոցի փողոցի հարևանությամբ գտնվող 19.71քմ մակերեսով առևտրի սրահը 195129 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 30.52քմ մակերեսով հողամասը, 24721 դրամով, օտարել Շամշադ Քոսակյանին:
5. Մաշտոցի 14-$^{Ա-1}$ հասցեում գտնվող 42 քմ մակերեսով առևտրի սրահը 415800 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 21 քմ մակերեսով հողամասը, 17000 դրամով, օտարել Սեիրան Հարությունյանին:
6. Մաշտոցի 84-$^{Ա-}$1/48 հասցեում գտնվող 20.4 քմ մակերեսով առևտրի սրահը 201484 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 20.4 քմ մակերեսով հողամասը, 16524 դրամով, օտարել Աշոտ Խաչիկի Խաչատրյանին:
7. Մաշտոցի փողոցի հարևանությամբ գտնվող 20 քմ մակերեսով ավտոտնակը 22000 դրամով և նրա զբաղեցրած 20 քմ մակերեսով հողամասը, 16200 դրամով, օտարել Ալբերտ Ռոբերտի Գյոզալյանին:
8. Խորենացի փողոցի հարևանությամբ գտնվող 20 քմ մակերեսով ավտոտնակը 22000 դրամով և նրա զբաղեցրած 20 քմ մակերեսով հողամասը, 16200 դրամով, օտարել Մեսրոպ Մեսրոպյանին:
9. Մաշտոցի 13-1^{Ա} հասցեում գտնվող 20 քմ մակերեսով ավտոտնակը 22000 դրամով և նրա զբաղեցրած 20 քմ մակերեսով հողամասը, 16200 դրամով, օտարել Սիլվարդ Սուրենի Առաքելյանին:
10. Մաշտոցի 82-33 հասցեում գտնվող 25 քմ մակերեսով առևտրի սրահը 247500 դրամով և նրա զբաղեցրած 25 քմ մակերեսով հողամասը 20250 դրամով, օտարել Սիրուշ Հարությունյանին:
11. Մաշտոցի 82-17^{Ա} հասցեում գտնվող 6.1 քմ մակերեսով առևտրի սրահը 60390 դրամով և նրա զբաղեցրած 6.1 քմ մակերեսով հողամասը 4941 դրամով, օտարել Թամարա Մելիքյանին:

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՁԵՌՁԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱԶԱՅԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ քաղաքի բնակիչներ Ռոբերտ Մաքսիմի Գևորգյանը, Մարուսյա Աբգարյանը, Վանցետ Պետրոսյանը, Վիկտոր Մելքումյանը, Գառնիկ Մելիքյանը և Նորիկ Մելիքյանը դիմել են, հայտնելով, որ 1992 թվականին սեփականության իրավունքով ձեռք բերած գյուղատնտեսական արտադրական նշանակության իրենց շինությունները /ֆերմա, չորանոց, խոզաբուծական ֆերմա, ոչխարաբուծական ֆերմա, կացարան/ հիմնովին քանդվել են, 90-ական թվականների վերջերից չեն օգտագործվում և խնդրել են զեղչել տարիներով կուտակված գույքահարկի գումարները:

Քաղաքապետարանի հանձնաժողովն ուսումնասիրելով դիմումներում բերված փաստերը՝ կազմել է համապատասխան ակտ:

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով հանձնաժողովի ակտը

Համայնքի ավագանին որոշում է

Զեղչել վերոնշյալ անձանց գյուղատնտեսական նշանակության արտադրական շինությունների գույքահարկի գումարները և այդ շինությունները դուրս գրել գույքահարկի բազայից.

Գևորգյան	Մաքսիմ	Սուրենի	- 38056 դրամ
Աբգարյան	Մարուսյա	Արշակի	- 106501 դրամ
Պետրոսյան	Վանցետ	Պետրոսի	- 88752 դրամ
Մելքումյան	Վիկտոր	Սերյոժայի	- 74424 դրամ
Մելիքյան	Գառնիկ	Լևոնի	- 61900 դրամ
Մելիքյան	Նորիկ	Զումշուդի	- 20612 դրամ
Ընդամենը			- 390245

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 29-Ա

ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ քաղաքի բնակիչ Արմեն Մարդանյանը դիմել է սեփականության իրավունքով իրեն պատկանող Մաշտոցի փողոցի թիվ 88-1 հասցեում գտնվող 336 քմ մակերեսով հողամասին կից նույն հասցեում գտնվող 278 քմ մակերեսով բնակավայրերի հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Դիմել է նաև Բերդ քաղաքի բնակիչ Աշոտ Օհանյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայկ Նահապետ փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող 100 քմ մակերեսով հողամասին կից Հայկ Նահապետ փողոցի թիվ 1/1-Ա հասցեում գտնվող 123 քմ մակերեսով բնակավայրերի հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,,ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետով, ՀՀ հողային օրենսգրքի 58 հոդվածով, ՀՀ Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի ,,Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին,, թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 20 կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված հողամասերն ընդգրկված չեն ՀՀ Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, հողամասերի տրամադրումը չի սահմանափակում և չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ՝ չի հակասում քաղաքաշինական նորմերին, հողամասերի օգտագործման նպատակը համապատասխանում է քաղաքաշինական, հողաշինարարական փաստաթղթերին և նկատի ունենալով, որ որպես առանձին գույքային միավորներ նշված հողամասերի օտարումն աճուրդային կարգով հնարավոր չէ և նպատակահարմար է ընդլայնման կարգով օտարել նշված անշարժ գույքի սեփականատերերին՝

համայնքի ավագանին որոշում է

1. Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Մաշտոցի փողոցի 88-1 Ա հասցեում գտնվող 278 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի հողամասը 225180 դրամ կադաստրային արժեքով, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Բերդ քաղաքի բնակիչ Արմեն Մարդանյանին:
2. Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Հայկ Նահապետ փողոցի 1/1հասցեում գտնվող 123 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի հողամասը 99630 դրամ կադաստրային արժեքով, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Բերդ քաղաքի բնակիչ Աշոտ Օհանյանին:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 28-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2.5 ՀԵԿՏԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նշանակության 2 հա 2-րդ կարգի ջրովի վարելահողը, ծածկագիրը, 11-002-332-008, տրամադրել մրցույթով, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով:
Վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տարեկան 40000 դրամ:
2. Համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 0.5 հա 3-րդ կարգի ջրովի վարելահողը, ծածկագիրը՝ 11-002-319-050, տրամադրել մրցույթով, վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով:
Վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տարեկան 8000 դրամ:

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 27-Ն

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 8-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Բերդի քաղաքապետարանի և կատարողների միջև կնքված 2011 թ. հուլիսի 1-ի N ԱԱԿ –1658 եռակողմ պայմանագիրը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները

համայնքի ավագանին որոշում է

Բերդի համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 18-ի N 8-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 600 հազար դրամով և հաստատել բյուջեի եկամտային մասը 151106.93 հազար դրամ, ծախսային մասը՝ 151106.93 հազար դրամ,

2) որոշման N 1 և N 2 հավելվածներում ,,Անասնաբուժական ծառայություն,, հոդվածում ավելացնել 600 հազար դրամ:

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Բերդի համայնքի
ավագանու 2011 թվականի
նոյեմբերի 24-ի N 27-Ն որոշման

2011 թվականի համայնքի տեղական եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների

/հազար դրամ/

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	5700.00
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	13100.00
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3500.00
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	4000.00
5	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7310.50
6	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿՃԱՐ	2400.00
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	550.00
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	9000.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	45560.50
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	45560.50
9	ԴՈՏԱՑԻԱ	101371.90
10	ՊԱՏԿԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2525.23
11	ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	600.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	104497.13
12	ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	
13	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	
14	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	1049.30
	ԱՄԲՈՂՋԸ	151106.93

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Բերդի համայնքի
ավագանու 2011 թվականի
նոյեմբերի 24-ի N 27-Ն որոշման

Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2011թ.

/հազար դրամ/

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	41880.9
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	31341.8
3	ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ	23314.5
4	ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ	12774.7
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	17700
6	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	4000
7	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	10049.3
8	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ	1620.5
9	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2525.23
10	ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	600
11	ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5000
12	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	300
	ԸՆԴԱՄԵՆԸ	151106.93

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 26-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի բյուջեի ընթացքի մասին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

Բերդի քաղաքապետ Ա. Շառյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Բերդի համայնքի
ավագանու 2011 թվականի
նոյեմբերի 24-ի N 26-Ա որոշման

Բերդի համայնքի բյուջեի 2011 թվականի 3-րդ եռամսյակի եկամուտների կատարման մասին

/հազար դրամ/

Հ/հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ	Տարեկան Պլան	3-րդ եռամսյակի պլան	3-րդ եռամսյակի կատարողական	Կատարման %
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	5700.00	4275.00	2940.10	68.77
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	13100.00	9825.00	6301.90	64.14
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3500.00	2625.00	2604.00	99.20
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	4000.00	3000.00	2502.20	83.41
5	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7310.50	5482.90	2577.30	47.01
6	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ	2400.00	1800.00	2012.70	111.82
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	550.00	412.65	170.00	41.20
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	9000.00	6750.00	4868.60	72.13
	Ընդամենը սեփական եկամուտներ	45560.50	34170.55	23976.80	70.17
9	ԴՈՏԱՑԻԱ	101371.90	76028.90	75961.40	99.91
10	ՔԿԱԳ	2525.23	1893.93	1557.40	82.23
11	Անասնաբուժական ծառայություն	0.00	0.00	0.00	
	Ընդամենը պաշտոնական տրանսֆերտներ	103897.13	77922.83	77518.80	99.48
12	Ֆոնդային բյուջե	1049.30			
	Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը	150506.93	112093.38	101495.60	90.55

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Բերդի համայնքի
ավագանու 2011 թվականի
նոյեմբերի 24-ի N 26-Ա որոշման

Բերդի համայնքի բյուջեի 2011թ. 3-րդ եռամսյակի ծախսերի կատարման մասին

/հազար դրամ/

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Տարեկան պլան	3-րդ եռամսյակի պլան	3-րդ եռամսյակի կատարողական	Կատարման %
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	41880.90	31410.70	30897.70	98.37
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	31341.80	23506.35	21028.00	89.46
3	ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ	23314.50	17485.90	17557.20	100.41
4	ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ	12774.70	9581.00	8590.00	89.66
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	17700.00	13275.00	13275.00	100.00
6	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	4000.00	3000.00	2362.00	78.73
7	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	6049.30			
8	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ	1620.50			
9	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2525.23	1893.93	1392.10	73.50
10	ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	0.00	0.00		
11	ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5000.00	3750.00	2657.70	70.87
12	Գյուղատնտեսություն/պարարտանյութի տեղ., կոմբայնի տեխ.զննում/	4300.00	3225.00	4080.00	126.51
	Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը	150506.93	107127.88	101839.70	95.06